



ՀԱՆԳԻՍ ՀՈԳԻՈՑ

ԿԱՐԱՊԵՏ ՊԵՅՏ ՏԻՒԶԵԱՆ

ՀՐԱՄԱՆԱՑԱՐ ԿԱՐԳԻՆ ՄՐԲՈՑՆ ՄԱԼԻՐԻՑԻՈՍԻ

ԵՒ ԴԱՇԱՐՈՒ ՍԱՐԴԻՆԻՈՑ

ԱՍՊԵՏ ԵՐԿՐՈՐԴԻ ԿԱՐԳԻՆ ՄԼՃԻՑԵԱՅ

ԵՒ ԱՅԼ ԱԴԱՄԱՆԴԱԿԱՊ ՆՇԱՆԱՑ

ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍԵՐՈՒԹԵԱՆ

Ուղիղ գատումն , հայրենասիրութիւն ճշմարիտ , անխոռվ վեհանձնութիւն , հաւատարիմ ու անշահասէր տիրասիրութիւն , այլ հիմն ամենայնի և ամբութիւն՝ հաստատուն բարեպաշտութիւնը պիտի ըլլայ մարդուս կենաց առաջնորդն ու ուղղիչը : Վակայն որչափ քիչ կը գտնուին այնպիսի անձինք , որոնց վրայ զարմանալով մը տեսնենք այսպիսի վեհանձն առաքինութեանց զեղեցիկ միութիւնը և 'ի ներքուստ բզիսէ մեր սրտէն սէր ու յարգութիւն , որով և զայնպիսիները կորսնցընելնուս ցաւը սզախառն տրտմութեան հետ ձգեն մեր սրտին վրայ իրենց անուշ յիշատակն ալ : Այսպիսի արտմախառն , բայց անուշ յիշատակ մը յարգութեան և սիրոյ հետ միատեղ խառնուած՝ արթնցուց մեր սրտին մէջ մօտերս վեհազն առաքինոյ մը կորուատը , որուն վարքն ու կենցաղավարութիւնը օրինակ մի էր ճշմարիտ քրիստոնէի ու բարի քաղաքացւոյ : 1855 տարւոյն վերջին ամսամուտը՝ վերջին եղաւ նաև աղնիւ անձի մը սրտին բարախմանը . Տիւզեան աղնուազարմ զերդաստանին ծերունի նահապետը մեծապատիւ ԿԱՐԱՊԵՏ ՊԵՅՏ ղեկանմբերի 9ին (նոյեմբ . 27) իր մահկանացու կեանքը կնքեց՝ երթալով առ իւր Պարզեատուն :

Երբոր այս վեհագին անունը կը յիշուի , քանինքը ազգերնուա ու օտարաց մէջ խորին հառաջանք մը կը հանեն , վկայելով ՚ի փորձոյ իր հաստատուն և ուղիղ աստուածաղաշտական ու եղբայրսիրական սկզբանցն ու դործքերուն , և հիմա զուրկ գտնալով իրենք զիրենք այնպիսի բարեկամէ մը , բարերարէ մը ու դժաճ օգնականէ : . . .

Այս ազնիւ և մեր պատկառանացն ու սիրոյն արժանաւոր անձս հինգերորդ էր Տիւզեան Յովհաննէս Զելէպւոյն զաւակացը մէջ , ծնեալ ՚ի 28 յուլիսի յամին 1779 : Իր պատանեկութեան ժամանակէն յայտնուեր էր իր յաջողակութիւնն ու փափուկ սիրտը , որով իր ոչ ըստ բաւականին սպացեալ եղբօրը Արծիս Զելէպւոյն հետ եւրսպացի ճարտարի առաջնորդութեամբը զեղարուեսափ ետեն եղաւ . և իր հանճարոյն ու ճարտարութեանը սրատնառաւ յարգելի և պատուելի էր Ասուղան Սէլիմկայսեր զիմաց , որով և յետապայ մեծամեծ արդեանց յոյա ու տկնկալութիւն կու տար :

Բայց Աստուած , որուն ձեռքն է մեծին ու պղտիկին բազզը , և ինքն է անոնց գործոցը տնօրէն , անքնին կամօքը ուկեց որ իր գերդաստանին հետ այս աղնուասիրու անձս ալ ցաւոց բաժակը քամէ՛ մասն ունենալու համար երկնաւոր վարդապետին վշտակիր կենացը , որ է յատուկ նշան քրիստոնէական կենաց : Այլ այն վեհանձն առաքինին , որուն բոլոր յոցը երկինքն է , և ուր իր դանձը ապահովցուցած է , շվախնար ամենեին երկրաւոր վշտերէ . այնպիսւոյն վրայ յաջողութիւնն ու ճախորդութիւնը հաւասար ազգեցութիւն ունին , մանաւանդ թէ ըսեմ՝ ազգեցութիւն իսկ ամենեին չունին . կը նմանի Ովկիանու ափունքներուն , որոնց վրայ ալիքները երրեմն ծիծաղերս կը ծփծփան ու երրեմն ալ ահաւոր մոնչմամբ կը զոռան ու կը զարնուին . բայց այն ափունքը ոչ ծիծաղելէն կը խարուին և ոչ ալ զոռալներէն կը վախնան : Այսպէս այս առաքինւոյս սիրտը բազզին ամէն կերպ դարձուածոցը զիմաց անշարժ ու անյողգողդ էր . յաջողութեանց անուշ երեսը իրեն սիրտը յափշտակած չէր՝ որ բազզին զառն նայուածքէն ալ խոռվէր , այլ յամենայնի ինքըզինքը Աստուծմէ տրուած բարեացը սպասաւոր միայն համարելով և մատակարար ՚ի բարերարել առ այլս , յաջողութիւնն ալ՝ ճախորդութիւնն ալ , բազզն ալ՝ դժբազզութիւնն ալ նոյնպիսի սրտով կընդունէր նոյն Պարզնատուին ձեռքէն : Իրեն համար անցածը այնպէս էր , իրը թէ մարդկային բնութեան անշրաժեշտ հետեանքն ըլլար . որով անյիշաչար մտօք մինչե իր կենացը վերջին շունչը իր բարոյական և բնական ուժը միայն ուրիշի օգնելու կը դորձածէր , կարօտելոց ձեռք տալով , աղքատներուն վիշտը ըստ կարի թեթեցընելով , և իր սիրելի ազգին բարւոյն համար ձեռքէն եկածին չափ օգնութիւն ընելով : Եւ այս ամենայն ջանասիրութեանց մէջը իր հաւատարիմու անշահախնդիր տիրասիրութիւնը զարմացուցեր էր զամենքը . նմանապէս իր յարզն ալ՝ բարեգութ և վեհափառ կայսեր առջե աւելցեր էր , որուն օգտին համար անխոնջ աշխատեցաւ խոհեմ և մտադիր ծառայութեամբը , և արժանապէս կրեց իր հաւատարիմ և համբերատար կրծոցը վրայ բազմաթիւ պատուոյ նշանները , զորոնք այլ և այլ ժամանակ իր յատուկ արդեամբը վաս-

տըկեցաւ . որովհետև երկնաւոր թագաւորը յետ փորձելու զինքը վշտաց մէջ , ուղեց այս անցաւոր աշխարհքիս մէջ ալ վարձատրել զինքը իր պատուական ու պատկառելի ծերութեան ժամանակը՝ իրքն առհաւատչեայ մը այն փառաց , զորն որ իր առաքինութեանցը համար պատրաստած էր երկինքը : Երկինքը՝ ուր ուղղած էր իր նպատակը , և ուր կը սպասէր զտնալու իր ճշմարիտ ու անանց փառքն ու երանութիւնը . անոր համար խնդութեամբ ընդունեցաւ իր յերկինս կոչումը , զորն որ կիմացընէր իրեն բնութեան տկարութիւնը . զրահաւորեց ինքըինքը ամենայն հոգեորական զինուք , ու տուաւ իր ետքի սիրալիր ու հրաժարական ողջոյնը իր արտասուալից տրտմած ընտանեացը , որոնք իրքն Հօր գերդաստանին առեր էին բոլորտիքը , և նահապետական քաղցր ու հանդարտ մահուամբ փակեց անցաւորէս իր աչուըները՝ յանանցն բանալով իր հոգւոյն աչուըները , և աւանդելով զհողին Արարչին ձեռքը , ուսկից զայն առեր էր և յոր միայն յուսացեր էր ՚ի կեանս իւր . և իր վշտօք ու ծերութեամբ մաշած մարմինը թողուց իրը վերջին միսիթարութիւն իր ընտանեացը , մեծահանդէս յուղարկաւորութեամբ դնելու զայն ՚ի հող , մինչև որ նորաստեղծ և լուսազարդ նորէն օր մը զգենու զայն :

Գնա ուրեմն , և օրէնեալ հողի , քու Արարչիդ զիրկը , ուր Է քու եօթանասնամեայ բազմավիշտ և առաքինի կենացդ պատրաստեալ հանգիստը . և եթէ չես ծանր սեպեր զոնէ զառնալու միւսանդամ ու նայելու այս արտասուաց հովտին վրայ , դարձուր մէյ մը աչքդ քու ցաւալից գերդաստանիդ զոր թողուցիր , և ընդունէ նաև այս փոքր՝ բայց ՚ի ջերմ սրտէ բղխեալ սիրոյ և յարզութեան նուէրը , զոր երախտազէտ սրտիւ կը մատուցանէ Քեզ՝ իր մէկ բարերարին և պաշպանին՝ Միաբանութիւնս Միսիթարայ :

